ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 07 >> Դեկտեմբերի 2015թ. N 63 - Ա

ք. Արմավիր

ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2015 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնում,առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում,կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնում և մշակույթի և սպորտի բաժնում անցկացնել 2015 թվականի բյուջետային տարվա գործունեության աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Վիգեն Խաչատրյանի, Արմինե Գրիգորյանի և Հայկ Պողոսյանի կողմից:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին (պետի պաշտոնակատար՝ Վ.Խաչատրյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել աուդիտ անցկացվող վարչության, բաժինների պետերին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին (պետի պաշտոնակատար՝ Վ.Խաչատրյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 21 աշխատանքային օրյա ժամկետում:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ